

## ՅՆՈՐՔՆԵՐ ԵՒ ԵՐԱԶՆԵՐ

(Օ. ՇԵՆՅԱՆԻ)

### Կ Ե Ա Ն Ք Ի Ն Ո Ւ Է Ր Ն Ե Ր

Ես տեսայ քնած կնոջը, նա երազում էր, թէ նրա առաջ կանգնած է Կեանքը և իւրաքանչիւր մի ձեռքում բռնած ունի մի մի նուէր՝ մէկի մէջ սէր, միւսի մէջ աղատութիւն։ Եւ Կեանքը ասաց կնոջը՝ «Ընտրիր»։ Երկար ժամանակ ընտրում էր կինը, վերջապէս նա ասաց՝ «աղատութիւն»։

Եւ Կեանքը ասաց նրան՝ «Դու լաւ ընտրութիւն արիր, և թէ անուանէիր սէր, ես քեզ կը տայի այն, ինչ դու խնդրէիր ու կը հեռանայի քեզանից և էլ երբէք չէի վերադառնայ։ Իսկ հիմա դալու է մի օր, երբ ես կը վերադառնամ քեզ մօտ։ Այդ օրը դու կը գտնես երկու նուէրներ ևս միասին մի ձեռքում»։

Ես լսեցի, ինչպէս կինը քնած անդը ուրախ խնդաց։

### Գ Ի Ա Ե Տ Ա Ն Մ Ա Ն Պ Ա Ր Տ Է Զ Ն Ե Ր Ի Մ Է Զ

Կինը զբօսնում էր ծաղկալի, դրախտանման պարտէզներում, ծաղիկների սքանչելի անոյշ հոտը բուրբում էր օդում ու նա քաղում էր ծաղիկներ մէկը միւսի հետեւից։

Յանկարծ Պարտաճանաչութիւնը իր գունատ, խիստ գծերով կանգնեց նրա առաջ և նայեց նրա վրայ. և կինը թողեց ծաղիկներ հաւաքելը, բայց շարունակում էր զբօսնել նրանց մէջ, խնդում էր և ուրախանում, իսկ նրա ձեռքերը ծաղիկներով լիքն էին։

Եւ Պարտաճանաչութիւնը կրկին երեւաց նրան և նայեց նրան, իսկ նա... նա երեսը չուռ տուեց և հեռացաւ։

Երբ կինը նորից տեսաւ այդ սառը և գունատ դէմքը, նա

վայր ձգեց ամենադեղեցիկ ծաղիկները, որ ձեռքերում բռնած ունէր, ու լուռ առաջ գնաց:

Բայց Պարտաճանաչութիւնը կրկին վերադարձաւ նրա մօտ. կինը ախ քաշեց, ցածր խոնարհեցրեց գլուխը և ծոռեց դէպի պարտէզի կէքը, բայց երբ դուրս գնալիս յետ նայեց նա և իր սիրած ծաղիկները տեսաւ արեգակի փայլի տակ, դառն լաց եղաւ:

Եւ կինը դուրս գնաց պարտէզից և դռները յաւիտեան փակուեցին նրա յետեւից, բայց նրա ձեռքերում մնում էին դեռ ևս այն ծաղիկներն ու կոկոնները, որ նա հաւաքել էր պարտիզում, և նրանք քնքոյշ բուրմունք էին տարածում անապատում:

Բայց Պարտաճանաչութիւնը անդադար հետեւում էր կնոջը. կրկին երևաց նրան իր մեռելային գոնատ զէմքով, և կինը գիտէր, թէ ինչու համար է նա և կել, կինը բաց արեց իր զոյգ ձեռքերն ևս ու վայր ձգեց իր բոլոր ծաղիկները և առանց ծաղիկների առաջ գնաց չոր, բորբոքուած աչքերով:

Վերջապէս Պարտաճանաչութիւնը դալիս է ամենավերջին անգամ:

Կինը ցոյց է տալիս նրան իր դատարկ ձեռքերը՝ նրանց մէջ էլ ոչինչ չէր մնացել: Բայց նա շարունակ նայում էր կնոջը, ահա վերջապէս կինը բաց է անում իր կուրծքի շորը, հանում է այնտեղից մի փոքրիկ ծաղիկ, որ նա այնտեղ թագորել էր և գնում է գետնի վրայ: Հիմա նա էլ ոչինչ չունի տալու... Ու կինը հեռացաւ գնաց, և անապատի մոխրագոյն աւազը փոթորկի նման պտոյտներ արեց նրա շուրջը:

Թարգ. ռուս. Յ. Տ.-Դ.